ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԻ ԹՈՒ ԲԻ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-15-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	David Medical	DSE/DLE60-DCR60B DCR60G	David Medical	Էնդոսկոպիկ կարող արտիկուլյացիոն,գծային, դանակով, 440մմ: Էնդոսկոպիկ արտիկուլյացիոն կարող-կտրող գործիքը նախատեսված է 12 մմ տրոկարների հետ աշխատելու համար: Էնդոսկոպիկ կարող արտիկուլյացիոն գործիքը նախատեսված է նվազագույն ինվազիվ միջամտությունների համար, որը միաժամանակ կիրառում է 3 կամ 6 շարք ամրակներ: Գործիքը կիրառվում է անաստամոզներ ստեղծելու և օրգանների(ստամոքս, աղիքներ,թոքեր)հեռացման ժամանակ՝ շնորհիվ տիտանե ամրակների բարձր ամրության :Հիմնական առավելություններից է լիսեռի 360 աստիճան պտույտը և աշխատանքային մասի մինչև 45-50 աստիճան արտիկուլյացիան (ծռումը՝) նեղ տարածքներում մուտք գործելու համար: Գծային էնդոսկոպիկ կարիչը կազմված է սալից, կեռիկի

					փամփուշտից, շեղբից, ամրակապ թևքից, լիսեռից, պտտվող բռնակից, անվտանգության լծակից, վերադարձնող կոճակից, ֆիքսված բռնակից, փակող և կրակող ձգանից: Կտրող դանակը ներկառուցված է կարիչի մեջ: Ներքին կառուցվածքը ներառում է փոխանցման բլոկը և փոխանցման ձողը: Գործիքը կարող է լիցքավորվել մինչև 8 անգամ մեկ հիվանդի համար , մեկ պրոցեդուրայի ընթացքում: Ստեպլերի առանցքի միացումը պետք է դիմանա ոչ պակաս, քան 90 Ն ճնշմանը : Գծային կտրիչի վրա կա անվտանգության կողպեք, որը կանխում է կրկին լիցքավորումը: Միանգամյա օգտագործման էնդոսկոպիկ ստեպլերի հիմնական նյութը մաքուր տիտան է, որը հարմար է վիրաբուժական իմպլանտների համար՝ համաձայն EN ISO 5832-2 ստանդարտի: Սալը, շեղբը և լիսեռը պատրաստված են չժանգոտվող պողպատից՝ համաձայն EN ISO 7153-1 ստանդարտի: Գործիքի մյուս բաղադրիչները, ներառյալ ստեպլերի պատյանը և պարագաները, պատրաստված են ABS-ից կամ պոլիկարբոնատից: Սարքը մատակարարվում է ստերիլ վիճակում՝ Գամմա ստերիլիզացմամբ: Օգտագործման ժամկետը սահմանվում է 5 տարի ստերիլիզացումից հետո: Օգտագործողների կողմից կրկնակի ստերիլիզացիա թույլատրված չէ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազը 50%-ի առկայություն: Որակի վկայականների առկայություն: Լրակազմում էնդոսկոպիկ գծային կտրիչ-կարիչ գործիքի քանակը 15 հատ: Գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կանաչ քարթրիջներ, որոնք դնում են երկու

					եռաշերտ կար ։ Արտիկուլյացիոն կապի շնորհիվ քարթրիջը թեքվող է։ Քարթրիջի երկարությունը՝ 60 մմ։ Կարերի փամփուշտի մակերեսը բաժանված է երեք ձևի՝ հարթ, աստիճանաձև և շրջանաձև մակերեսով։ Քարթրիջները բաղկացած են փամփուշտից, սալից, շեղբից, լիսեռից և կարից։ Անաստամոզը պետք է դիմանա առնվազն 3,6կՊա ճնշմանը։ Կանաչ քարթրիջ՝ երկու եռակի շարքերով, ստեպլերի բարձրությունը 4.2 մմ՝ ներքին շարքից արտաքին շարք, փակ ամրակի բարձրությունը 2,3մմ։ Տիտանից պատրաստված ամրակի ձգման ամրությունը առնվազն 240մՊա։ Պիտանելիության ժամկետը ստերիլիզացիայից հետո 5 տարի։ Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ի առկայություն։ Լրակազմում գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կանաչ քարթրիջների քանակը 50 հատ։ Գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կապույտ քարթրիջներ, որոնք դնում են երկու եռաշերտ կար ։ Արտիկուլյացիոն կապի շնորհիվ քարթրիջը թեքվող է։ Քարթրիջի երկարությունը՝ 60 մմ։ Կարերի փամփուշտի մակերեսը բաժանված է երեք ձևի՝ հարթ, աստիճանաձև և շրջանաձև մակերեսով։ Քարթրիջները բաղկացած են փամփուշտից, սալից, շեղբից, լիսեռից և կարից։ Անաստամոզը պետք է դիմանա առնվազն 3,6կՊա ճնշմանը։Կապույտ քարթիրջ՝ ստեպլերի երկու եռակի շարքերով, ստեպլերի բարձրությունը ներքին շարքից արտաքին շարք տատանվում է 3.5 մմ փակ ամրակի բարձրությունը 1,5մմ։ Տիտանից պատրաստված ամրակի ձգման ամրությունը առնվազն 240մՊա։

				Պիտանելիության ժամկետը ստերիլիզացիայից հետո 5 տարի:Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազը 50%-ի առկայություն: Լրակազմում գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կապույտ քարթրիջների քանակը 50 հատ: Լրակազմում ներառված բոլոր ապրանքները պետք է պարտադիր լինեն մեկ արտադրողի արտադրության և պետք է պարտադիր համատեղելի լինեն միմյանց հետ: Լրակազմը նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կանաչ քարթրիջների և գծային անաստամոզի ունիվերսալ ապարատի կապույտ քարթրիջների համար պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ավտարիզացիոն նամակ (երաշխիքային-լիազոր նամակ): Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ծագման սերտիֆիկատ և համապատասխանության հավաստագիր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Би Ту Би ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-15-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
12				